



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՓԱՍՏԱԲԱՆՆԵՐ ՀԱՅԿ ԱԼՈՒՄՅԱՆԻ, ՀՈՎՀԱՆՆԵՍ ԽՈՒԴՈՅԱՆԻ ԵՎ ՄԻՀՐԱՆ ՊՈՂՈՍՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննության առնելով Բարձրագույն դատական խորհրդի նախագահ Ռուբեն Վարդազարյանի 19.03.2020թ. դիմումի (մուտք № 564-20) և զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների հիման վրա փաստաբաններ Հայկ Ալումյանի (արտոնագիր թիվ 284), Հովհաննես Խուդոյանի (արտոնագիր թիվ 2040) և Միհրան Պողոսյանի (արտոնագիր թիվ 1112) նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

1. Դիմումի համառոտ բովանդակությունը.

Բարձրագույն դատական խորհրդի (այսուհետ նաև՝ ԲԴԽ) նախագահ Ռուբեն Վարդազարյանը (այսուհետ՝ նաև Դիմող) դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (այսուհետ՝ նաև Պալատ), հայտնել է, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի վարույթում քննվող թիվ ԵԴ/0253/01/19 քրեական գործով 2020 թվականի մարտի 17-ին, ժամը 13:00-ին հրավիրվել է դատական նիստ: Դատական նիստը դատավոր Աննա Դանիբեկյանի վատառողջ լինելու պատճառով չի կայացել, որի մասին դատարանի աշխատակազմը նախապես դատավարության մասնակիցներին, այդ թվում՝ ամբաստանյալների պաշտպաններին տեղեկացրել է հեռախոսազանգի միջոցով:

Այդուհանդերձ, ԵԴ/0253/01/19 քրեական գործով ամբաստանյալների պաշտպաններ Հայկ Ալումյանը, Արամ Վարդևանյանը, Միհրան Պողոսյանը և Հովհաննես Խուդոյանը 2020 թվականի մարտի 17-ին, ժամը 13:00-ի սահմաններում ներկայացել են Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Շենգավիթ նստավայր և մուտք են գործել թիվ 1 դատական նիստերի դահլիճ:

Դատական նիստերի դահլիճում գտնվելու ընթացքում ամբաստանյալների պաշտպանների կողմից դրսևորվել է անհարգալից վերաբերմունք դատարանի և դատավարության մյուս մասնակիցների հանդեպ: Մասնավորապես, պաշտպան Միհրան Պողոսյանը նստել է նախագահող դատավորի համար նախատեսված սեղանի դիմաց և դատական կարգադրիչների պահանջներից հետո միայն **30 մարտի 2020թ.**

թիվ 62-Ա/ԿԳ-20005

դադարեցրել իր գործողությունները, պաշտպան Հովհաննես Խուդոյանը նստել է մեղադրանքի կողմի համար նախատեսված հատվածում (այն սեղանի շուրջ, որտեղ տվյալ գործով դատական նիստերին մասնակցում են մեղադրողները), Հայկ Ալումյանը, սեղանին հարվածելով, աղմուկ է բարձրացրել: Գտնվելով դատական նիստերի դահլիճում, վերջիններս ծաղրական վերաբերմունք են դրսևորել դատական իշխանության նկատմամբ, կազմակերպել են «դատավարություն» և կատարել նմանաբնույթ անհարգալից գործողություններ:

Պաշտպանների վերոնշյալ վարքագիծը տեսաձայնագրվել է զանգվածային լրատվամիջոցների ներկայացուցիչների կողմից:

Դիմողը նշել է, որ նկարագրված վարքագծով անհարգալից վերաբերմունք են ցուցաբերել դատարանի և դատավարության մյուս մասնակիցների նկատմամբ, որը կարող է հասարակության առջև նվազեցնել դատական իշխանության և արդարադատության հեղինակությունը:

2. Զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների համառոտ բովանդակությունը.

Պալատի մամուլի խոսնակի կողմից ներկայացվել են հետևյալ հրապարակումները՝

2.1. Aysor.am լրատվականի հետ ունեցած հարցազրույցի ընթացքում Հայկ Ալումյանը նշել է, որ տվյալ գործի շրջանակներում հեռախոսազանգի միջոցով են տեղեկացրել, որ նիստը չի կայանալու: Մինչդեռ դրա մասին պետք է տեղեկացվեր կամ գրավոր, կամ դատարանի դահլիճում: Վերջինս նաև նշել է, որ դատավորի օգնականը կամ նիստերի քարտուղարը փորձեց Հովհաննես Խուդոյանին դուրս հրավիրել ու առանձին ասել, թե ինչ է տեղի ունենում: «Դա ձև չէ, քաղաքակիրթ ու օրինական ընթացակարգ չէ՝ բացատրություններ ներկայացնելու համար»: Նրա փոխանցմամբ, կարգադրիչներից մեկի միջոցով իրենց փոխանցել են, որևէ մեկը չի պատրաստվում գալ ու հայտնել, թե ինչ է կատարվում: Հայկ Ալումյանը նաև հավելել է. «Հավանաբար, դա իրենց պատվից ցածր համարեցին: Այն, ինչ տեղի ունեցավ, անհարգալից մոտեցում է մեր նկատմամբ, և մենք ուզեցինք ցույց տալ, որ ավելի ցայտուն ու փոխադարձ անհարգանք մենք կսկսենք ցույց տալ: Իրենք հասկացան դա ու բարեբախտաբար շուտ հասկացան, եկավ մի կին, ներկայացավ, որպես այս դատարանի պատասխանատու, շատ քաղաքավարի, նորմալ ձևով տեղեկացրեց, թե ինչու նիստը տեղի չի ունենալու, ինչից հետո մենք դուրս եկանք»¹:

2.2. www.azatutyun.am լրատվականի հետ ունեցած հարցազրույցում փաստաբան Միհրան Պողոսյանն ընդունել է դատավորի աթոռին նստելու փաստը և հավելել, որ եթե դատական նիստերի քարտուղարը գար նիստերի դահլիճ և հայտներ նիստը հետաձգելու մասին, այդ պարագայում նման բան չէր անի: Միևնույն ժամանակ Հայկ Ալումյանը պնդել է, որ դատավորի աթոռին նստելը անհարգալից վերաբերմունք չէ: Հայկ Ալումյանը պնդել է՝ պետք է տարբերակել դատարանն ու դատարանի շենքը: Ալումյանն այդ օրը, ձեռքը սեղանին խփելով՝ պահանջներ էր հնչեցրել, ինչը լսելի չէր ծայնամեկուսիչ

¹ https://www.aysor.am/am/news/2020/03/17/%D5%80%D5%A1%D5%B5%D5%AF-%D4%B1%D5%AC%D5%B8%D6%82%D5%B4%D5%B5%D5%A1%D5%B6/1672615?fbclid=IwAR32byXS_UCYnPPZc2t9jiV7-Ns79ez3aZjqQqDU3iLSbxTUVbUJI2WhHmM

ապակու մյուս կողմում գտնվող լրագրողներին²:

2.3. www.a1plus.am լրատվականի հետ ունեցած հարցազրույցի ժամանակ Հայկ Ալումյանն անդրադարձել է վերոնշյալ միջադեպին և նշել, որ Միհրան Պողոսյանի՝ դատավորի աթոռին նստելն ակցիա չէր, և եթե մի բան օրենքով արգելված չէ, ոնց կարող է ԲԴԽ նախագահի կողմից այդ գործողությունը համարել անհարգալից³:

3. Փաստաբանների համառոտ դիրքորոշումը.

«Փաստաբանության մասին» օրենքի 39.3 հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ փաստաբաններ Հայկ Ալումյանին, Հովհաննես Խուդոյանին և Միհրան Պողոսյանին առաջարկվել է ներկայացնել բացատրություն դիմումի վերաբերյալ:

Հայկ Ալումյանը 20.03.2020թ. Պալատ է ներկայացրել միջնորդություն, որով հայտնել է իր դիրքորոշումն այն մասին, որ ՀՀ բարձրագույն դատական խորհրդի նախագահ Ռուբեն Վարդազարյանը, որպես ԲԴԽ նախագահ, օժտված չէ փաստաբանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու խնդրանքով ՀՀ փաստաբանների պալատի նախագահին դիմելու լիազորությամբ և ի հավաստումն այդ պնդման վկայակոչել է ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի, «Փաստաբանության մասին» օրենքի և ՀՀ Սահմանադրության համապատասխան հոդվածները, և միջնորդել է ՀՀ Բարձրագույն դատական խորհրդի նախագահ Ռուբեն Վարդազարյանի 19.03.2020թ. դիմումի հիման վրա կարգապահական վարույթ հարուցելը մերժել: Միևնույն ժամանակ, հաշվի առնելով տվյալ գործի շրջանակներում տեղի ունեցած իրադարձությունների վերաբերյալ ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի դիրքորոշման կարևորությունը, **միջնորդել է հարուցել կարգապահական վարույթ**, որպես առիթ ընդունելով այդ իրադարձությունների վերաբերյալ զանգվածային լրատվամիջոցների հրապարակումները:

4. Վերլուծությունը և եզրահանգումը.

Գտնում եմ, որ Բարձրագույն դատական խորհրդի նախագահ Ռուբեն Վարդազարյանի դիմումի (դիմումում նշված հիմքերի և հիմնավորումների սահմաններում) և զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների հիման վրա փաստաբաններ Հայկ Ալումյանի, Հովհաննես Խուդոյանի և Միհրան Պողոսյանի նկատմամբ պետք է հարուցել կարգապահական վարույթ՝ հեղկյալ պատճառաբանությամբ.

4.1 Կարգապահական վարույթ հարուցելու առիթը

ՀՀ փաստաբանների պալատին է դիմել Բարձրագույն դատական խորհրդի նախագահ Ռուբեն Վարդազարյանը:

«Փաստաբանության մասին» օրենքի (այսուհետ, նաև՝ Օրենք) 39.1-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթներն են՝ **պետական, տեղական ինքնակառավարման և ոչ պետական մարմինների, ինչպես նաև այլ անձանց դիմումները (բողոքները)**, ինչպես նաև զանգվածային լրատվամիջոցների

² <https://www.azatutyun.am/a/30499385.html>

³ https://a1plus.am/hy/article/363073?fbclid=IwAR3sB9P59StckF_UZaBcsr9D0qkVE4pW0IU3cv4VfPc8w3ptITuU3Sx_HXk

հրապարակումները:

Հիմք ընդունելով վերոգրյալը, և հաշվի առնելով փաստաբան Հայկ Ալումյանի փաստարկները, հարկ է անդրադառնալ այն հարցադրմանը, թե արդյոք ներկայացված դիմումը պետք է դիտարկել որպես պետական մարմնի, թե՛ այլ անձի դիմում:

ՀՀ Սահմանադրության 173-րդ հոդվածի համաձայն՝ *բարձրագույն դատական խորհուրդն անկախ պետական մարմին է, որը երաշխավորում է դատարանների և դատավորների անկախությունը*:

ՀՀ դատական օրենսգիրք սահմանադրական օրենքի (այսուհետ՝ **Դատական օրենսգիրք**) 84-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ *բարձրագույն դատական խորհրդի նախագահը հրավիրում և վարում է Բարձրագույն դատական խորհրդի նիստերը, ստորագրում է Բարձրագույն դատական խորհրդի որոշումները, ներկայացնում է Բարձրագույն դատական խորհուրդն այլ մարմինների հետ հարաբերություններում, ինչպես նաև իրականացնում է Բարձրագույն դատական խորհրդի բնականոն գործունեության ապահովմանն ուղղված այլ լիազորություններ*:

Բարձրագույն դատական խորհուրդը կազմված է խորհրդի անդամներից, ինչպես նաև իր աշխատակազմից:

Դատական օրենսգրքի 84-րդ հոդվածի 11-րդ մասի դրույթից հետևում է, որ պետական մարմին հանդիսացող բարձրագույն դատական խորհրդի (այսուհետ՝ **նաև ԲԴԽ**) ի պաշտոնե ներկայացուցիչը հանդիսանում է ԲԴԽ նախագահը: Հետևաբար, ԲԴԽ անունից պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների, ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ հարաբերություններում առանց լիազորագրի հանդես գալու իրավունքը վերապահված է ԲԴԽ նախագահին: Այս մոտեցումից բացառություն կարող են կազմել միայն այն դեպքերը, երբ օրենսդիրը կոնկրետ հարցով որոշում կայացնելու իրավասությունը վերապահել է բարձրագույն դատական խորհրդին՝ իր անդամների կազմով:

Այս փաստարկի օգտին է վկայում նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 24-րդ հոդվածի 3-րդ մասով նախատեսված իրավակարգավորումն առ այն, որ՝ *պետական կամ տեղական ինքնակառավարման մարմնի անունից լիազորագիրը տալիս է նրա ի պաշտոնե ներկայացուցիչը՝ վերջինիս ստորագրությամբ և այդ մարմնի կնիքի դրոշմամբ*: Վարչական դատարանում վեճի դեպքում, ԲԴԽ-ի անունից դատարանում կարող է հանդես գալ ԲԴԽ նախագահի կողմից տրված լիազորագրում նշված ներկայացուցիչը:

Հետևաբար ԲԴԽ նախագահի կողմից ներկայացված դիմումը՝ համարվում է պետական մարմնի կողմից տրված դիմում՝ «Փաստաբանության մասին» օրենքի 39.1 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի իմաստով:

Միաժամանակ, հարկ է նշել, որ ցանկացած անձ (ֆիզիկական և իրավաբանական անձ) կարող է բողոք ներկայացնել և բարձրացնել փաստաբանի վարքագծի քննարկման հարց, բացառությամբ Պալատի ընդհանուր ժողովի կողմից 19.10.2019 թվականի թիվ 1-Լ որոշմամբ նոր խմբագրությամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (այսուհետ՝ **Փաստաբանի վարքագծի կանոնագիրք** կամ **Կանոնագիրք**) հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի

2.1.2 ենթակետում նշված Կանոնագրքի որոշ կանոնների (առնչվում են վստահորդների հետ փոխհարաբերություններին) խախտման հարցերի:

Միաժամանակ, փաստաբաններ Հայկ Ալումյանի, Հովհաննես Խուդոյանի և Միհրան Պողոսյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու առիթ են հանդիսանում զանգվածային լրատվամիջոցների հրապարակումները:

4.2. Կարգապահական վարույթ հարուցելու հիմքը

Օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն՝ *փաստաբանը պարտավոր է պահպանել սույն օրենքի, փաստաբանի վարքագծի կանոնագրքի և փաստաբանների պալատի կանոնադրության պահանջները:*

Օրենքի 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Օրենքի 39.1-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *կարգապահական վարույթ հարուցելու հիմքն է փաստաբանի արարքի մեջ սույն օրենքի կամ փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված պահանջների խախտման հարկանիշների առերևույթ առկայությունը:*

4.2.1. Փաստաբաններին վերագրվող վարքագիծը

Դիմումի և զանգվածային լրատվամիջոցների հրապարակումների համաձայն՝ փաստաբաններ Հայկ Ալումյանը, Հովհաննես Խուդոյանը, Միհրան Պողոսյանը և Արամ Վարդևանյանը հեռախոսազանգի միջոցով տեղեկացվել են, որ 2020 թվականի մարտի 17-ին, ժամը 13:00-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Շենգավիթ նստավայրում թիվ ԵԴ/0253/01/19 քրեական գործով նշանակված դատական նիստը չի կայանալու, դատավոր Աննա Դանիբեկյանի վատառողջ լինելու պատճառով: Այնուամենայնիվ, փաստաբանները ներկայացել են Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Շենգավիթ նստավայր և մուտք են գործել թիվ 1 դատական նիստերի դահլիճ:

Արդյունքում, փաստաբաններ Հայկ Ալումյանին, Հովհաննես Խուդոյանին և Միհրան Պողոսյանին ըստ էության վերագրվում է 2020 թվականի մարտի 17-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի Շենգավիթ նստավայրում դրսևորած հետևյալ վարքագիծը՝

4.2.1.1. Միհրան Պողոսյանը նստել է նախագահող դատավորի համար նախատեսված սեղանի դիմաց.

4.2.1.2. Հովհաննես Խուդոյանը նստել է մեղադրանքի կողմի համար նախատեսված հատվածում.

4.2.1.3. Հայկ Ալումյանը, սեղանին հարվածելով, աղմուկ է բարձրացրել.

4.2.1.4. Հայկ Ալումյանը, Հովհաննես Խուդոյանը և Միհրան Պողոսյանը գտնվելով դատական նիստերի դահլիճում, ծաղրական վերաբերմունք են դրսևորել դատական իշխանության նկատմամբ, կազմակերպել են «դատավարություն» և կատարել նմանաբնույթ անհարգալից գործողություններ:

4.2.2. Դիմումում նշված փաստաբանների վարքագծին համընկնող կանոնները

Կանոնագրքի 2.2.2 ենթակետի համաձայն՝ *մասնագիտական, հասարակական, հրապարակախոսական կամ այլ բնագավառում (ոլորտում) փաստաբանը պետք է խուսափի այնպիսի վարքագծից (գործողությունից կամ անգործությունից), որը կարող է կասկածի տակ դնել կամ խաթարել փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը:*

Կանոնագրքի 4.1 կետի համաձայն՝ փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև, պետք է ենթարկվի այդ դատարանի կամ տրիբունալի գործունեությունը կարգավորող կանոններին, այդ թվում պետք է հարգանքով վերաբերվի դատավորին և/կամ դատավարության մյուս մասնակիցներին: Այդ կանոններին ենթարկվելու պարտականությունը չի սահմանափակում փաստաբանի՝ դատավորի, արբիտրի, կամ վարույթի այլ մասնակիցների գործողությունների դեմ առարկելու կամ այլ դատավարական իրավունքներից օգտվելու հնարավորությունը: Փաստաբանը դատարանի հանդեպ հարգանք դրսևորելու հետ միաժամանակ պետք է իր վստահորդի շահերը պաշտպանի անկաշկանդ և անվախ՝ հաշվի չառնելով իր անձնական շահերը:

Իրավունքի գերակայության հանդեպ ունեցած հարգանքի վրա հիմնված հասարակության մեջ փաստաբանը հատուկ դեր է ստանձնում: Փաստաբանի պարտականությունները չեն սկսվում և ավարտվում միայն հանձնարարականների բարեխիղճ կատարմամբ:

Փաստաբանի գործունեությունը փաստաբանի վրա դնում է բազմազան իրավական և բարոյական պարտականություններ՝

- դատարանների և այլ մարմինների առջև, որտեղ փաստաբանը ներկայացնում է վստահորդի շահերը: Այս հարաբերություններում փաստաբանը պետք է հարգանքով վերաբերվի այն մարմիններին, որոնց հետ նա առնչվում է, պետք է ձգտի նպաստել իրավունքի զարգացմանը, իրավակիրառ պրակտիկայի բարելավմանը, ինչպես նաև արդարադատության պատշաճ և իրավաչափ իրականացմանը:

- փաստաբանի մասնագիտության հանդեպ ընդհանրապես և այդ ոլորտի յուրաքանչյուր անդամի նկատմամբ մասնավորապես: Փաստաբանը հանդիսանալով փաստաբանական համայնքի (հանրույթի) պատասխանատու անդամ, պետք է մշտապես կատարելագործի իր գիտելիքները, հարգանք ցուցաբերի փաստաբանների նկատմամբ, ինչպես նաև պետք է խուսափի փաստաբանի կամ փաստաբանության նկատմամբ վստահությունը կամ հարգանքը խաթարող վարքագծից:

4.3. Կարգապահական վարույթի սահմանները

Դիմումով և զանգվածային լրատվամիջոցների հրապարակումներում ներկայացված փաստերի և իրավունքի (վարքագծի կանոնների) համադրման արդյունքում, գտնում եմ, որ սույն որոշման 4.2.1.1-4.2.1.4 ենթակետերում նկարագրված փաստաբաններ Հայկ Ալումյանի, Հովհաննես Խուդոյանի և

Միհրան Պողոսյանի վարքագիծը՝ Պալատի խորհրդի կողմից հաստատվելու դեպքում, **առերևույթ** կարող է հակասել «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Կանոնագրքի 2.2.2 ենթակետի և 4.1 կետի պահանջներին:

Միաժամանակ հարկ է արձանագրել, որ սույն որոշման 4.2.1.1-րդ և 4.2.1.2-րդ ենթակետերում նկարագրված վարքագիծն ինքնին չի կարող հիմք հանդիսանալ փաստելու համար Օրենքով կամ Կանոնագրքով նախատեսված պահանջների խախտման հատկանիշների առերևույթ առկայությունը: Այսինքն, նախագահող դատավորի համար նախատեսված սեղանի դիմաց, կամ մեղադրանքի կողմի համար նախատեսված հատվածում փաստաբանի նստելն ինքնին չի կարող հիմք հանդիսանալ արձանագրելու համար, որ փաստաբանի կողմից դրսևորվել է անհարգալից վերաբերմունք դատարանի կամ դատավարության մասնակցի նկատմամբ կամ խախտվել է Կանոնագրքի այլ դրույթ: Հետևաբար, սույն որոշման 4.2.1.1-րդ և 4.2.1.2-րդ ենթակետերում նկարագրված **Միհրան Պողոսյանի և Հովհաննես Խուդոյանի** վարքագիծը պետք է գնահատման առարկա դարձվի սույն որոշման 4.2.1.4 ենթակետում նկարագրված վարքագծի հետ համակցության մեջ:

Քննարկման առարկա պետք է դարձվի նաև Կանոնագրքի 4.1 կետի կիրառման հնարավորությունը, քանի որ փաստաբանները դատական նիստի չեն մասնակցել և ֆիզիկապես ներկա են գտնվել դատական նիստերի դահլիճում, առանց դատավորի ներկայության և մասնակցության: Այս պայմաններում, պարզաբանման կարիք ունի այն հարցը, թե արդյոք Կանոնագրքի 4.1 կետում նշված «*փաստաբանը, ով ներկայանում է կամ մասնակցում է գործին դատարանի կամ արբիտրաժային տրիբունալի առջև ...*» կանոնը վերաբերում է նաև այն դեպքին, երբ փաստաբանը ներկայացել է դատական նիստերի դահլիճ, առանց դատավորի ներկայության և մասնակցության:

4.4. Անմեղության կանխավարկածը

Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելն ինքնին չի նշանակում, որ փաստաբանը թույլ է տվել կարգապահական խախտում և այդ հարցի վերջնական պատասխանը կարող է տրվել միայն կարգապահական վարույթի իրականացման արդյունքում՝ Պալատի խորհրդի համապատասխան որոշմամբ:

5. Եզրափակիչ մասը

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» օրենքի 39-րդ հոդվածի, 39.1 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, 4-րդ մասի և 39.3-րդ հոդվածի պահանջներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. Բարձրագույն դատական խորհրդի նախագահի դիմումի և զանգվածային լրատվության միջոցների հրապարակումների հիման վրա

փաստաբաններ Հայկ Ալումյանի (արտոնագիր թիվ 284), Հովհաննես Խուդոյանի (արտոնագիր թիվ 2040) և Միհրան Պողոսյանի (արտոնագիր թիվ 1112) նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 2-րդ կետի, ինչպես նաև Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.2.2 ենթակետի և 4.1 կետի խախտման հատկանիշներով (կարգապահական գործ թիվ ԿԳ-20005):

2. Նշված կարգապահական վարույթով դիմող ճանաչել Բարձրագույն դատական խորհրդին:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝

– կարգապահական գործը սահմանված ժամկետում հանձնել հերթական կարգապահական գործ նախապատրաստողին.

– սույն որոշման մեկական օրինակ ուղարկել դիմողին և փաստաբաններ Հայկ Ալումյանին, Հովհաննես Խուդոյանին և Միհրան Պողոսյանին՝ պարզաբանելով նրանց «Փաստաբանության մասին» օրենքի 39² հոդվածով նախատեսված իրավունքները, ինչպես նաև սույն որոշումը հրապարակել Պալատի կայքում:

Հայաստանի Հանրապետության
փաստաբանների պալատի նախագահ՝

Արա Զոհրաբյան

30 մարտի 2020թ.
թիվ 62-Ա/ԿԳ-20005
ք. Երևան